

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՎԿԱՅՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անժիկ Յակոբեան-Կանհիմեան

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՎԿԱՅՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անժիկ Յակոբեան-Կանհիմեան

**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՇԱՐՈՒԱԾԸ՝
ԷԶԱԴՐՈՒՄ՝
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ՝**

Աննա Գազանճեան
Շաիէ Լուսարարեան
Nubar Printing Press

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	էջ
ՅԱՌԱՋԱԲԱՆ	5
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓ ԳԻԾԵՐ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ	7
ՄՈՒՏՔ	9
ԳԱ՞ՂԹ ԹԷ՞ ԱՔՍՈՐ	11
ՀԱԻԱՆԱԲԱՐ ՀԱՅՐԱ ԸԼԼԱԼՈՒ ԷՐ	13
ՕՏԱՐ ԼՈՒՍԱՐՁԱԿՆԵՐԸ	15
ՄԱՅՐԱ ԳՏԱՅ, ԲԱՅՑ ...	17
ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱՆՁՐԵԺԸ	19
ՄԱՅՐԻԿԻՍ ՏՈՒՆԸ	21
ՄԱՆՈՒԿ «ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐՈՒ» ՊԱՏԻԺԸ	23

ՅԱՌԱԶԱԲԱՆ

Ներկայ գրքոյկը կը պարփակէ Հայոց Ցեղասպանութենէն վերապրած եօթը արեւքսանդրահայ ականատես վկաներու հետ Անժիկ Կանիմեանի կատարած հարցազրոյցները:

Այս հարցազրոյցները կատարուած են Ցեղասպանութեան 85-ամեակին՝ 2000 թուականին եւ բոլորն ալ ատենին լոյս տեսած են «Արեւ»ի մէջ, 20 Ապրիլէն 25 Մայիս 2000 երկարող ժամանակահատուածին ընթացքին, հարցազրոյցներուն տակ յիշուած թուականներուն հերթականութեամբ:

Հարցազրոյցներուն լոյս ընծայումէն առաջ հեղինակը 18 Ապրիլ 2000-ին «Արեւ»ի մէջ ստորագրած է լուսաբանական յօդուած մը հրատարակուելիք հարցազրոյցներուն մասին:

Այդ յօդուածով հեղինակը ընթերցողին ուղղուած իր խօսքին մէջ, ի միջի այլոց կը գրէ. «Ապրիլ ամսուայ ընթացքին պարբերաբար ձեր ուշադրութեան կը ներկայացնեմ այն յուշերը որ կրցայ գրի առնել Եղեռնէն վերապրած իննսունի մօտ կամ իննսունը բոլորած մարդոցմէ»:

Այժմ, 2015 Ապրիլին, 15 տարի անցած է այդ գրառումներուն վրայ եւ եօթը ականատես վկաները ոչ եւս են: Սակայն, կը մնան իրենց բարի յիշատակները եւ իրենց վկայութիւնները:

Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով Գահիրէի ՀԲԸՄ-ի պաշտօնաթերթ «Տեղեկատու»ն սիրով ընդառաջեց իր աշխատակցուհիին՝ Անժիկ Կանիմեանի փափաքին, այդ վկայութիւնները Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով կրկին անգամ հրատարակելու:

Այս երկրորդ հրատարակութիւնը կ'իրագործուի թեթեւ խմբագրական հպումներով, բոլոր վկայութիւնները մէկտեղելով գրքոյկի մը մէջ, որ որպէս յաւելուած պիտի բաժնուի «Տեղեկատու»ի Ապրիլ 2015-ի թիւին հետ:

Վերջացնելէ առաջ կը փափաքինք մեր շնորհակալութիւնը եւ երախտագիտութիւնը յայտնել Անժիկ Կանիմեանին, ատենին առած իր այս նախաձեռնութեան համար եւ իրեն կը մաղթենք նորանոր իրագործումներ:

«Տ.»

ԱՆԺԻԿ ԱՐՄԵՆԱԿԻ ՅԱԿՈՐԲԱՆ-ԿԱՆԻՄԵԱՆ Կենսագրական Ամփոփ Գիծեր եւ Տեղեկութիւններ

Ծնած է Երեւան:

Միջնակարգ ուսումը ավարտած է 1970-ին:

Երեւանի պետական համալսարանի բանասիրական ճիւղը ավարտած է 1985-ին:

Աշխատած է միջնակարգ դպրոցի մէջ որպէս հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցչուհի:

«Երեկոյեան Երեւան» եւ «Աւանգարդ» թերթերուն աշխատակցած է որպէս թղթակից եւ գրական աշխատող:

Գրած է բանաստեղծութիւններ եւ պատմուածքներ:

1997-ին եկած է Եգիպտոս՝ Աղեքսանդրիա: Նոյն տարին ամուսնացած է Ճարտարագէտ Երուանդ Կանիմեանի հետ:

Աշխատակցած է «Արեւ» եւ «Յուսաբեր» օրաթերթերուն եւ ՀԲԸՄ-ի «Տեղեկատու» պարբերաթերթին:

* * *

Անժիկ Կանիմեան երբ կը տեղեկանայ թէ Աղեքսանդրահայ համայնքին մէջ Հայոց Մեծ Եղեռնէն վերապրած մարդիկ կան, որոնց պատմութիւնները գրի չեն առնուած, կը ծեռնարկէ այդ կարեւոր գործին:

Ան դեռ ուսանողութեան օրերէն ծանօթ եղած է այդ աշխատանքին: Իր մանկութիւնն ալ անցած է «Էրգր»էն գաղթած մարդոց շրջանակին մէջ: Նման պատմութիւններ մանկութենէն ի վեր կը լեցնէին իր փոքրիկ ականջները: Իր մեծ հայրն ալ Էրգրումցի եղած է:

Մեծ նուիրումով սկսած է այդ գործը: Երբ ծանօթացած է վերապրողներուն, հարազատներ դարձած են: Անոնք չէին քաշուիր իրմէ եւ բոլոր հարցերը կը կիսուէին իր հետ:

Դիւրին չէ եղած, բայց Անժիկ Կանիմեանը կրցած է մտերմանալ բոլորին հետ:

Վերապրողները ուրիշներու ներկայութեան ոչինչ կը պատմէին: Եղած են մարդիկ, որոնք իրենց զաւակներուն իսկ ոչինչ պատմած էին, մինչդեռ իր հետ անկեղծօրէն ամէն ինչ պարզած էին:

Այս աշխատանքին արդիւնքը կ'ըլլայ եօթը վերապրողներու վկայութիւններուն վաւերագրումը, որ տրուած է ներկայ գրքոյկով:

ՄՈՒՏՔ

Ներկայ գրքոյկը կը նուիրեմ պապիս՝ Էրզրումցի Յովհաննէս Տէր Յակոբեանի (Յովէս Տացուի) յիշատակին: Էրկրի մէջ «Տացուն» (այսպէս կը դիմէին, ապա կը պատմէին) ուսուցիչ էր, Եւրոպայի մէջ կրթութիւն ստացած ինժեներ էր, ընտանիքի հայր, մեծ ընտանիքի աւագը եւ օտարներուն մէջ ալ յարգանք վայելող մարդ: Երբ Տացուն հեռացաւ Էրկիրէն, այլեւս միայնակ որբ մըն էր. «Կեանք էին շնորհած» որպէս յարգուած մարդ, աչքի առաջ սուրի քաշելով ընտանիքը: Ես պապիս չեմ տեսած, բայց այնքան շատ լսած եմ անոր պատմութիւնները որ շատ լաւ կը ճանչնամ զինքը:

Գրքոյկը տխուր է, բայց ի՞նչ ընել, մեր անցեալն է, մեր կեանքը: Տխուր է թէ ուրախ, մեր պապերու ապրած, կամ չապրած կեանքն է: Այսօր իւրաքանչիւր հայ ընտանիք այս պատմութիւններուն նման, կամ աւելի տխուր ու դաժան պատմութիւններ ունի: Ես յաջողեցայ զրուցել միայն եօթը մարդու հետ: Ընդամէնը եօթը: Սակայն պատմութիւններէն իւրաքանչիւրը մեր ամբողջ ազգի պատմութիւնն է, ամէն մէկուս անցած ճանապարհը: Անասելի դժուար բան է փորփրել մարդուս յիշողութիւնը: Յիշողութիւն, որ կրակէ երակներով կը հոսի ուղեղէն մինչեւ սիրտը, կ'այրէ ամբողջ մարմինը, կը խորովէ հոգին: Այրածին ծուխն արցունքի տեսքով կը հոսի պատմողի աչքերէն: Կը լսենք այս մարդոց ու կը հասկնանք որ դժոխային դառնութիւններով լեցուած են իրենց մանկութեան օրերը: Մանուկ չեղած, ծերեր էին արդէն 5, 6, 8 տարեկան երեխաները: Այսօր ուրախ ու անհոգ մանկութիւն ապրող մանուկները կրնա՞ն հասկնալ իրենց մեծ հայրերը: Կը կարծեմ որ կրնան: Քանզի արդէն երրորդ-չորրորդ սերունդն է, բայց չէ մոռցած ...: Չի կրնար չյիշել ու պահանջատէր չըլլալ ...:

Պատմութիւնները նման են իրարու, բայց եւ տարբեր: Տարբեր է պատմելու եղանակը, խօսքերու ընտրութիւնը, մօտեցումը: Մէկը մեծ զայրոյթով կը պատմէ, միւսը՝ տխուր արցունքներով, միւսը՝ ամօթ կը զգայ որ իր եւ իր ազգի հետ պատահած է այս ամէնը: Տիկին Աղաւնին պոռաց բարկութենէն, երբ լսեց «որբ» բառը: Բայց իր պատմութեան մէջ չկրցաւ խուսափիլ այդ չարաբաստիկ բառէն: Որքան ալ իրեն կը բարկացնէր այդ բառը, նորէն նախադասութեան մը մէջ կը կրկնէր բազմիցս. «Մամա ունէի, բայց որբ էի, վերջն ալ ամուսինս մահացաւ՝ նորէն որբացայ, հիմա ալ որբի մը պէս օտարի տան

մէջ կ'ապրիմ»:

Որքեր: Այս է իմ հերոսներուս հաւաքական անունը, որ կարծես խարան ըլլար ամէնուն ճակտին: Իսկ օրիորդ Նուէրը իր դաժան պատմութեան մէջ չկրցաւ արտասանել որեւէ գէշ բառ. «Զինուորները գիշերը կը մտնէին այն վրանները, ուր երիտասարդ հարս ու աղջիկ կար, փիսութիւն կ'ընէին»: Անոր ըսած ամենավատ բառը «փիսութիւն»ն է: Պրն. Բէմպէճեանի պատմութիւնը չարաձճի մանուկի մը արկածախնդրութեան կը նմանի:

Պրն. Պէնօհանեանինը տեսակ մը հպարտութիւն ունի: Ենթատեքստ ունի, վրէժխնդրութիւն՝ թուրքերուն դէմ. «Ղուք ինձ ոչնչացնել կ'ուզէիք, ես կրցայ ապրիլ եւ հինգ զաւակ ունիմ ...»: Այո՛, մէկի դէմ հինգ:

Եղեռնը վերապրածներու իւրաքանչիւրին կեանքը վրէժ է, իւրաքանչիւր զաւակը՝ չկրակուած փամփուշտ ...: Անոնց ապրելով է որ յարատեւեց ազգս:

Սիրելի՛ ընթերցող, գիրքը կը յանձնեն քու դատիդ: Կարդա՛ եւ դո՛ւն ալ խորիէ քու մանկութեանդ ու վրէժիդ մասին:

ԳԱՐԹ ԹԷ՞ ԱՔՍՈՐ

Հայրս չեմ յիշեր: Զինուոր առած էին: Օրէնքով բոլոր էրիկ մարդիկը զինուոր առին՝ սկիզբը երիտասարդները, վերջն ալ ւաւելի մեծերը:

Այս բաներէն ետքը լուր մը ելաւ որ հայերը պիտի գաղթեն առժամ-եայ: Եւ ամբողջ ժողովուրդը եզան կառքեր կը վարծէր, կը բեռցնէր իր ունեցածը: Կը հաւաքէր պզտիկները, ուտելիք եւ անշուշտ դրամ: Ես կը յիշեմ ամէն բանի համար կարմիր ոսկի կու տային ժանտարմաներուն, ասկեարներուն: Ամէն տուն սայլով մը բռնեց գաղթի ճամբան: Գաղթ, որ իրականութեան մէջ աքսոր էր, ի՞նչ գաղթ: Ճամբան մեզի հետ ժանտարմաներ կային իբրեւ թէ մեր ապահովութիւնը հոգալու նպատակով: Բայց երբ ամէն անգամ քիւրտ ու տաճիկ խուժանը կու գար, մէկը չէր պաշտպաներ մեզի: Այդ խուժանը բանտերուն մէջ էր, եւ ազատ արծակուած էր, որպէսզի մեզի՝ աքսորեալներուս նեղութիւն տրուի: Խուժանը կը յարծակէր, կը կողոպտէր, գեղեցիկ աղջիկներ կը փախցնէր, հետը կ'առնէր:

Ճամբան յաճախ դիակներ կը տեսնէինք: Մայրս, հորաքոյրս կը բացատրէին որ անոնք մեզմէ առաջ ճամբայ ելլողներն էին: Սպաննուած էին եւ թաղող չէր եղած: Ամէն օր յարծակում կար: Այդ պահակները կը ձգէին, որ քիւրտերը եւ տաճիկները ամէն տեսակ գէշութիւն ընեն: Մեզի հոգ չէին տանիր, դեռ կ'օգնէին թալանին ու սպանութիւններուն: Բոլոր աղջիկները, երիտասարդ կիները երեսնին սխտոր, ցեխ կը քսէին, շատեր ինքնասպան կ'ըլլային որ թուրք ու տաճիկ խուժանին ձեռքը չիյնան: Ով որ դրամ ունէր կրցաւ ւաւելի երկար շարունակել ճամբան, մինչեւ որ դրամը վերջացաւ: Ոսկի կու տային, որ եզը չտանին, կառքը չտանին, չսպաննեն, չգողանան:

Մեր կարաւանը քառասուն աչք ունէր, քառասուն եզ ու կառք՝ քառասուն տուն: Երբ հասանք Եփրատ գետի կամուրջը, շատ քիչ մնացած էինք, բայց հոն ահագին ժողովուրդ կար որ մեզմէ առաջ եկած էր եւ դեռ եկողներ կային: Եփրատի այդ կամուրջէն ետք սուրիական հող էր: Հոն կեցանք մէկ օր: Լոյսը բացուեցաւ: Ժողովուրդը մաս-մաս տարին, տարին, տարին ..., ո՞ր, չեմ գիտեր:

Մայրս մեզի հետ էր, մենք երեք եղբայր եւ մեր հորաքոյրը: Հօրաքոյրս, որ շատ ճարպիկ էր, միջոց մը գտաւ որ Մալաթիա երթանք: Հոն գործարան մը կար, որ կարպետ կը հիւսէին: Իբր թէ ատոնց վարպետ ըլլալու համար պիտի երթայինք: Տաճիկ զինուոր էր, ոստիկան

էր, չեմ գիտեր, աստոր հետը միասին Մալաթիա մտանք: Մեզի տուն մը տուին, որուն մէջ ո՛չ կարպետ կար, ո՛չ մէկ բան: Մեր ունեցածովը մտանք հոն: Հօրաքրոջս ամուսինը հոն փռապան էր: Մնացինք տարիէն քիչ մը պակաս: Մալաթիա մնացած ժամանակ մայրս մահացաւ: Մահանալը կը յիշեմ, բայց եղբայրս կը պատմէր որ մեր բնակած տունին քով պարտէզ մը կար, այդ պարտէզին մէջը թաղած են: Այդ չեմ յիշեր:

Հօրաքոյրս նորէն մարդ գտած էր քիւրտերէն, որ մարդ կը փախցնեն գաղտնի կը տանին, կը բերեն: Ատանկ մարդու մը հետ, մենք՝ երեք եղբայր եւ մեր հօրաքոյրը, գիշերով ճամբայ ելանք Մալաթիայէն դէպի Մարգուան: Միշտ գիշերներն է որ կը ճամբորդէինք, իսկ ցերեկները ժայռերու տակ կը պահուըտէինք: Ճանապարհը լեցուն էր դիակներով: Բոլորը կը հոտէին, դիակները թաղող չկար, ձգած էին այդպէս, եւ բոլորը կը հոտէին:

Այդպէս երեք օրէն հասանք Մարգուան: Հոն հօրաքոյրս մեզի որբանոց դրաւ: Որբանոցը ամերիկեան գոլէճն էր, որուն մէջ որբ տղաներ հաւաքած էին եւ կը խնամէին:

Թօփալ Օսման մը կար որ եկած էր ետ եկողներուն կողոպտելու: Ամէնուն կողոպտեց, մեռցուց: Ըսաւ. «Անոնք որ դրամ ունին ազատ պիտի արձակուին»: Մարդիկ կ'երթային դրամ վճարելու, դրամը կ'առնէր իրենց ալ կը մեռցնէր: Այդպէս մեռցուեցաւ նաեւ մեր հօրաքոյրը:

Մեր որբանոցին շուրջը բարձր պարիսպ մը քաշուած էր: Գիշերները մեծ տղաքը գաւազաններով կը հսկէին որ մէկը պատէն ներս ջցատկէ:

Որովհետեւ գոլէճը բարձունքի վրայ էր, մենք կը տեսնէինք, ինչպէս մեծ փոսեր կը փորէին եւ դիակները մէջը կը նետէին: Մեր որբանոցին բարձունքէն երբ կը նայէինք, այդ փոսերէն գիշերը լոյս կ'ելլէր, զարմանալի լոյս մը ...:

Մեր մեծերը մեզի հոգեւոր երգեր երգել կու տային եւ կը համոզէին, որ այդ երգերուն շնորհիւ է որ գոլէճը չեն մտներ եւ մեզի չեն վնասեր: Բաւական մնացինք այդտեղ, յետոյ մեզի տարին Յունաստան, անկէ ետքը՝ Եգիպտոս:

Վահրամ Փալանճեան
Աղեքսանդրիա, Ապրիլ 2000

«Արեւ» օրաթերթ, 20 Ապրիլ 2000

ՀԱՒԱՆԱԲԱՐ ՀԱՅՐԱ ԸՆԼԱԼՈՒ ԷՐ

Ծնած եմ Եոզղատի Չաթ գիւղը: Մեծ գիւղ էր, հայաբնակ: Մեր գիւղը գրեթէ աւերակ եղած էր: Ես պզտիկ էի, շատ բան չեմ յիշեր: Հայրս երազի պէս կը յիշեմ: Երիտասարդները հաւաքած էին տեղ մը: Հաւանաբար մայրս ըլլալու էր որ ինծի գրկած՝ գացինք այնտեղ: Մէկը գրկեց զիս, համբուրեց, կրծքին սեղմեց, բայց ես չկրցայ դիմանալ. երեսին մազերը նեղեցին ինծի, իմ պզտիկ ձեռքերովս հրեցի, վար իջայ: Ամէն անգամ երբ կը յիշեմ, խղճի խայթ կ'ունենամ: Հայրս ըլլալու էր անպայման: Հօրս այլեւս չտեսայ: Այս կը յիշեմ միայն:

Մօրս սպաննեցին, թէ՞ հիւանդութենէ մահացաւ, չեմ յիշեր: Մեծ մայրս կը յիշեմ: Թօփալ Շուշան կ'ըսէին: Հերոսուհի էր: Վիզին վրայ կացինի հարուածի սպի մը կար: Իմ պզտիկ ձեռքս մէջը կ'առնէր: Քանի երիտասարդներու կեանքը ազատած էր, թուրքեր սպաննելով: Կը պատմէին որ տաճիկները կը փնտռէին այն տղաքը, որ քանի մը օր առաջ ասկեարները վնասած էին գիւղէն: Թուրքերը փորձած էին կրակի տալ յարդի դէզը, որուն մէջ պահուրտած էին տղաքը: Մեծ մայրս սպաննած էր այդ տաճիկները եւ ազատած քաջ երիտասարդները: Իսկ կացինի հարուածին մասին երբեք չպատմեց: Չէր ուզեր յիշել:

Մեր տունը ճիշդ ճամբու վրայ էր: Պարտէզին մէկ մասը բանջարանոց էր, միւս մասը՝ այգի: Գետին եգերքը հսկայ հսկայ բարտիի ծառեր: Տեսարանը սքանչելի էր: Արագիւները կու գային, կը յիշեմ կեր կու տայի անոնց, մինչեւ մեր դրան առջեւը կու գային: Օր մը երբ նորէն կը խաղայի արագիւներուն հետ, տեսայ գլուխնին գլխարկ դրած երկու պարոն, հետերնին խումբ մը երեխաներ, մեր տան մօտեցան: Ուզեցին ինծի ալ առնել, մեծ մայրս չձգեց: Յետոյ հասկցայ որ որք տղաք կը հաւաքէին:

Սակայն աւելի ուշ մեծ մայրս ստիպուեցաւ ինծի ալ որբանոց դնել: Այդ ժամանակ ջարդերը վերջացած էին արդէն եւ մարդիկ ազատ էին երթալ գալու: Կային մարդիկ որ աւանակ ունէին եւ բեռ կը տանէին կը բերէին գիւղերէն: Մեծ մայրս ատոնցմէ մէկուն հետ ինծի Թալասի ամերիկեան որբանոցը դրկեց: Ամէն օր որբերու բազմութիւն կու գար հոն: Որբանոց մտնողներուն նախ կը մաքրէին, վերքերը կը դարմանէին, կ'առողջացնէին:

Հոն էր որ մէկ ազգականիս հանդիպեցայ: Առաջին գիշերը միասին

պառկեցանք, տեղ չունէի: Ազգականս գլխու ցատկըտուք ունէր: Ինծի ալ փոխանցուեցաւ: Վիզին կացինի հետք կար եւ նորէն շատ խոր: Կ'ըսէր որ տաճիկի հարուած էր, իսկ ուրիշ տաճիկ մըն ալ բուժած էր զայն: Բայց գլխու ցատկըտուքը եւ վէրքերը դիւրին չէր բուժել:

Թալասի որբանոցը բաւական ժամանակ մնացինք: Յետոյ տեղափոխուեցանք Կեսարիա: Հոն մեծ եկեղեցի մը կար, սքանչելի շինութիւն՝ պատշգամներով, կամարներով: Այդ եկեղեցիին մեծ սրահին մէջ մաքրութիւն կ'ընէինք, երբ պատէն կիրը թափեցաւ եւ նկար մը երեւցաւ: Երբ ամբողջ նկարը ազատեցինք կիրէն, տեսանք որ «Սահակ-Մեսրոպ»-ի նկարն է: Ծեփած էին որ տաճիկները չաղծեն:

Գնդակի խաղ կը խաղայինք. փոս կը փորէինք որ գնդակը մէջը իյնայ: Օր մըն ալ փորած աստենս տեսայ որ մարմարէ բան մը կ'երեւի: Փորեցինք, փորեցինք եւ տեսանք որ արծան մըն է: Մինէճեանի՝ այն եկեղեցին շինողին արծանն էր, ճերմակ մարմարէ: Ջայն թաղած էին հողին մէջ, պահպանելու համար թուրք բարբարոսներէն: Մարդոց կեանքը պահպանել անկարելի էր, կը պահպանէին մշակոյթը, ով ինչ կրնար, ինչպէս կրնար: Մշակոյթին ապրիլն էր որ մեզի ապրեցուց:

Յետոյ մեզի տարին Ս. Կարապետ վանքը: Ան կատարեալ զօրանոց մըն էր, բերդ մը: Այնքան բարձր էր ան որ բուրգին գագաթը կարելի էր տեսնել, բայց ոչ վանքինը: Ան սեփական պարտէզ ունէր: Մուտքը շարժական կամուրջով էր, երկաթ դուռը՝ ամբողջովին կապարներով ծակծկած: Հոս ալ մնացինք ժամանակ մը, յետոյ մեզի տարին Լիբանան: Որբանոցին մէջ դպրոց կ'երթայինք եւ միաժամանակ արհեստ ալ կը սորվէինք: Ժամանակ մը ետքը սկսան մեզ ցրուել: Խումբով մը Եգիպտոս եկանք: Հոս մեզի բժշկական քննութիւն ըրին, որպէսզի տարիքնիս որոշեն: Փաստաթուղթ տուին որ ես 13 տարեկան էի: Որբանոցին մէջ մականունս Տիլէնեան գրած էին: Իմ իսկական մականունս Խաչիկեան եղած է: Այս ալ միայն քսան տարի առաջ գիտցայ դիպուածով մը:

Սկսանք աշխատիլ: Աշխատեցանք, ապրեցանք, զաւակներ մեծցուցինք:

Հայկազ Տիլէնեան
Աղեքսանդրիա, Ապրիլ 2000

«Արեւ» օրաթերթ, 26 Ապրիլ 2000

ՕՏԱՐ ԼՈՒՍԱՐՁԱԿՆԵՐԸ

Ես Իզմիրցի եմ: Շատ բան չեմ յիշեր, որովհետեւ պզտիկ էի: Երբ թուրքերը Իզմիր մտան, ամբողջ ժողովուրդը փախաւ: Ես կը յիշեմ մեծ իրարանցում մը. «Առէ՛ք պզտիկները, ձգեցէ՛ք ամէն բան: Արագ, արագ: Կու գան, արագ ...»:

Ականջներուս մէջ դեռ կը մնան այդ խօսքերը, որոնց իմաստը աւելի ուշ հասկցայ: Բայց ո՞ր փախչիլ, երբ ամբողջ քաղաքը թաւան է ու կոտորած. կը գողնան ու կը բռնաբարեն, կը տանջեն ու կը մեռցնեն, կ'աւերեն ու կրակի կու տան ...:

Պէտք էր մտածել, որ փրկութեան միակ միջոցը ծովն էր: Եւ շատերու հետ մեր ընտանիքն ալ յայտնուեցաւ ծովափը: Մարդիկը շատ էին, խառնաշփոթը՝ մեծ: Բոլորը սարսափահար էին ու շփոթած: Մարդկային ալիքը կը մօտենար նաւերուն, բայց նաւերը կուրացնող լոյսեր կ'արծակէին ահաբեկած ժողովուրդին վրայ: Նաւ շատ կար, բայց նստելու համար անցագրի (passeport) հարկ կար: Բոլորը կը վազէին հոս, հոն, ճար մը կը փնտռէին թուրք ասկեարներէն ազատելու համար:

Չեմ գիտեր ինչպէս, մեծ մայրս անգլիական հպատակութեան թուղթ ունէր: Այդպէս մայրս, ես եւ եղբայրս անցագիր ստացանք: Հօրս չտուին, բռնեցին, տարին: Վերջը գիտցանք որ յաջողած էր փախչիլ թուրքերու կախաղանէն եւ նախընտրած ինքզինքը ծովը նետել: Հօրս հետ հաշուեյարդարը աւելի խիստ էր, որովհետեւ մեծ հայրենասէր էր, հռետոր, ճանչցուած անձ:

Նաւահանգիստի նաւերը ինծի հրէշներ կը թուէին: Օտար երկիրներու նաւերը մեծ լուսարձակները մեր վրայ կ'ուղղէին որ լաւ տեսնեն մարդկային տանջանքներու այդ դժոխքը: Հաց կը բաժնէին. ո՞վ, ինչո՞ւ, չեմ գիտեր: Մարդիկ կը վազէին ամէն կողմ: Մէկը գաւակը կը փնտռէր, միւսը՝ մայրը, մէկը՝ հաց, մէկ ուրիշը ...: Իւրաքանչիւրը՝ փրկութեան դուռ մը:

Սակայն այդ լուսարձակներն ալ անզօր եղան աշխարհին ցոյց տալու թուրք չարագործներուն անմարդկային արարքները: Կամ գուցէ լուսարձակներու լոյսին տակ կը հսկէին իրենց պետութիւններուն հրահանգներուն ճիշդ գործադրութեան, ո՞վ գիտէ: Ես շատ պզտիկ էի, որ հասկնայի անոնց նպատակը: Այդ լոյսերը խաղ էին ինծի համար, բայց շատ անհաճոյ էին եւ կը նեղէին զիս: Մինչեւ այս

տարիքս ես ամէն օր կը յիշեմ այդ դաժան ու ծաղրական լուսարձակները:

Ինչպէս մեր ժողովուրդին մեծամասնութիւնը, ես ալ մօրս հետ օտար երկիր ինկայ: Նաւահանգիստի խառնաշփոթին մէջ, մեզի յաջողուեցաւ մտնել բազմաթիւ նաւերէն մէկը: Յունական նաւ մըն էր որ մեզի առաւ, բայց հեռու չտարաւ: Իջեցուց առաջին պատահած լեռնանցքի մօտ: Օտարներու մէջ ապրած իւրաքանչիւր օր կը ջանայի ապացուցել որ ես ազնիւ ու բարի մարդ եմ, որ հարկ չկար ծաղրել ինձի, իմ վիշտիս մէջ ու անօգնական վիճակիս համար:

Եգիպտոսի մէջ ուսում ստացայ, աշխատեցայ «Մոհառամբէս» ընկերութեան մէջ եւ պարզ պաշտօնեայի վիճակէն հասայ մինչեւ պատասխանատու պաշտօնի: Ինձի կը վստահէին ամբողջ ընկերութեան գործերը, հաշիւները, ղեկավարութիւնը: Անկեղծ աշխատանքս կը գնահատուէր շատ պարգեւներով, շնորհակալութեան ու գովասանքի թուղթերով, մետալներով: Բայց ամէն անգամ գնահատանքի խօսք, կամ պարգեւ ստանալու պահուն կը յիշէի օտար նաւերու լոյսերուն խաղը: Ու միտքիս մէջ կ'ըսէի. «Թող այս պահուն լուսարձակ ուղղեն վրաս, ես այս եմ, այս եմ»:

Իմ ապրած ամբողջ կեանքս դարձաւ պայքար մը, որ ապացուցեմ մարդկանց եւ մանաւանդ օտարներուն, որ ես արժանի չէի այդ չարաբաստիկ լուսարձակներու դաժան ծաղրանքին: Եւ ոչ միայն ես:

Հայկազ Տէտէեան

Աղեքսանդրիա

Ապրիլ 2000

«Արեւ» օրաթերթ, 2 Մայիս 2000

ՄԱՅՐՍ ԳՏԱՅ, ԲԱՅՑ ...

Մայրս գորգ կը գործեր: Ես կը սիրէի խաղալ այդ բուրդերուն հետ: Բայց երբ իր աշխատած պահուն դուրս կ'ելլէի, մայրս ինձի կը վախցնէր ըսելով. «Տուն մտիր, Աղունի՛կ, տաճիկը կու գայ քեզի կը տանի»: Ես կը վախնայի ու կը վազէի մօրս քովը: Ես տաճիկ չեմ տեսած, բայց մինչեւ հիմա ալ, երբ այդ խօսքը կը յիշեմ, մօրս ծայնը կու գայ ականջիս. «Տաճիկը կու գայ...»:

Եւ եկաւ տաճիկը, եկաւ ու տարաւ իմ երկիրս, տունս, հարազատներս, մայրս: Իսկ հօրս ատելի կանուխ տարած էր:

Տարաւ եւ ճակտի գիրի պէս վրաս կնքեց որբ անունը:

Կը յիշեմ այն օրը, երբ բոլորը կը փախչէին ու կը պոռային: Կը վազէին ու կը պոռային.

-Մուսթաֆա Քէմալը եկաւ ...: Վա՛յ անոր ով մնաց: Փախէք:

Այդ անունը երբեք չմոռցայ: Մուսթաֆա Քէմալ ..., տաճիկ ...: Ժողովուրդը կը փախչէր: Փախչող փախչողի էր: Ես ու մայրս ալ կը վազէինք:

Չեմ գիտեր ինչպե՞ս շոգենաւ ինկայ: Շոգենաւին մէջ մամաս կորցնցուցի: Կարծեցի որ ծովը ինկաւ: Ծովուն մէջ շատ մարդ կար: Ես մամաս հոն կը փնտռէի, բայց ... մարդիկ ծովուն մէջէն կը լողային, որ նաւ բարձրանան: Նաւերուն մէջէն ջուր կը թափէին անոնց վրայ: Որուն վրայ որ ջուր կը թափուէր, կը պոռար, կու լար: Այդ ջուրը հաւանաբար տաք էր, որովհետեւ շոգի կ'ելլէր: Տաք ջուրը կը թափէին որ մարդիկ չկարենան նաւ մտնել: Նաւերը տաճկական չէին, օտար էին: Ես նաւուն վրայ էի եւ տեսայ այդ ամէնը, իսկ մամաս չգտայ: Անօթի էի, կու լայի, հաց կ'ուզէի: Հաց տուին, բայց մամաս չկար ու չկար: Երագի պէս կը յիշեմ մայրս: Տարիներ յետոյ լրագիրներու միջոցով մայրս գտաւ զիս:

Զիս գտաւ ու նամակ կը գրէինք իրարու, բայց ո՛չ ինքը կրցաւ Յունաստան գալ, ո՛չ ես կրցայ Պոլիս երթալ զինքը տեսնելու: Ես որբանոցին մէջն էի, ո՞վ ինձի պիտի դրկէր մայրս տեսնելու: Մինչեւ մեծցայ մայրս մեռաւ, առանց զիս տեսնելու: Նամակներէն զիտցայ որ մամաս ուրիշ նաւ ինկած եւ Պոլիս գացած էր:

Այդ նաւը, որուն մէջն էի Յունաստան գնաց: Մարդիկ կ'իջնէին նաւէն: Ես ալ իջայ Լուտրաքի թէ Սալոնիկ էր, չեմ յիշեր: Փողոցը միակ՝ կու լայի: Լեզու չէի գիտեր, անօթի, ծարաւ, չէի գիտեր ո՞ր եմ ...:

Կին մը ձեռքէս բռնեց ու տարաւ տեղ մը: Հոն շատ պզտիկներ կային: Այդտեղ էր, որ սորվեցայ որք ու որքանոց բառերը: Փողոցներէն որք պզտիկները կը ժողվէին: Յետոյ որքանոց բացին Յունաստանի մէջ: Սիրա էր, որ ես ինքզինքս գտայ եւ գիտցայ ո՛վ եմ, ո՛ւր եմ: Գիտցայ մեր որքանոցին անունը՝ Ամերիքըն Սքուլ Նիլըր Իսթ: Դպրոց կ'երթայինք հայերը զատ, յոյները զատ: Հայերէն, անգլերէն եւ յունարէն գրել ու կարդալ սորվեցանք:

Սիրայի մէջ մեծցանք: 15,16 տարեկան էինք, երբ մեզի Եգիպտոս դրկեցին: Մեզի ըսին երեք երկիր կրնաք երթալ՝ Եգիպտոս, Ֆրանսա, Գերմանիա: Ես Եգիպտոս ուզեցի: Ես, Մաննիկ Մոմձեանը, Եսթէրը, Աղաւնի մը կար նաեւ ուրիշներ եկանք հոս: Բոլորը մեզի որբուհի կ'ըսէին եւ մինչեւ հիմա ալ այդ անունէն ազատում չկայ: Մեր գիտցած լեզուները օգտակար եղան, որ աշխատինք: Աշխատեցայ, ընտանիք կազմեցի, բայց մեծ տարիքիս դարձեալ որք մնացի ...:

Աղաւնի Փամպուքեան
Աղեքսանդրիա, Ապրիլ 2000

«Արեւ» օրաթերթ, 4 Մայիս 2000

ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱՆՁՐԵԷԸ

Թող ես դժոխքն ընկնեի՝
Չտեսնեի ջարդը մեր ...

Յովհ. Շիրազ

Օր մը Աֆիոն Գարահիսարի մէջ մունետիկը կանչեց որ մէկ շաբաթ վերջը հայերը պիտի աքսորուին:

Բոլոր հայերը իրենց ունեցածները տուներուն առջեւ շարելով սկսան «ծախել» թուրքերուն: Կը վաճառէին, սակայն ոչինչ գինեւորով, գրեթէ ձրի: Մինչ մունետիկը կը յանկերգէր. «Մի՛ գնէք, բոլորը մեզի՛ թուրքերուն պիտի մնայ»:

Շաբաթավերջին հայերը լեցուեցան շոգեկառքերը եւ վեց ժամ ճամբորդելով հասան վայր մը, որուն անունը չեմ յիշեր, երեք ու կէս տարեկան ըլլալուս պատճառով:

Հոնկէ ժողովուրդը ճամբորդեց եզան սայլերով, օրեր շարունակ զանազան վայրեր կանգ առնելով: Այդ երկար ճանապարհի ընթացքին շատ բան տեսայ: Տեղ մը, երեխայի աչքերովս տեսայ ոստիկանի մը հաստ գաւազանով հայ երիտասարդի մը չարաչար ծեծելը: Տեսայ նաեւ ոստիկաններ, որոնք քահանայի մը փակելով ոտնագնդակ կը խաղային: Յետոյ արտօնեցին որ վրանի մը ներքեւ աղօթք կատարուի, բայց եկան խանգարեցին, քահանային ծեծեցին եւ մեռցուցին:

Տեղ մը հանդիպեցանք ուրիշ քաղաքէ եկած գաղթականներու, որոնց մէջ էին մեծ հօրեղբօրս կինը եւ երկու աղջիկները: Կինը առաջարկեց որ աղջիկները մեր քովը մնան, հասկնալի պատճառով: Բայց հայրս ալ վախնալով՝ մերժեց: Ի դէպ, տասնամեակներ յետոյ, հայրս խղճի խայթ կ'ունենար իր մերժումին համար:

Հասանք Տարսոն, ուր ազգականի տուն իջեւանեցինք: Հոն երեք ամիս գաղտնօրէն մնացինք:

Առաւօտ մը պատուհանէն փողոց նայած ատենս փողոցէն թուրք մարդիկ անունս հարցուցին: Ըսի: Ծնողքիս անունը հարցուցին: Ըսի: Ետեւէս հայրս զիս ներս քաշեց: Երկու վայրկեան անց դուռը զարնուեցաւ: Թուրքերը հօրս ըսին որ երեք օրէն պէտք է մեկնինք քաղաքէն: Դարձեալ իշու սայլերով գացինք Հալէպ: Հոն մնացինք ամիս

մը: Գիշերները հայերը կը հաւաքուէին ընդարձակ սենեակի մը մէջ, իրարու քով՝ զրուցելու համար: Գիշեր մը յանկարծ դուռը բացուեցաւ եւ թուրք հազարապետ մը մտաւ: Տեսնել կ'արժէր թէ ինչ սարսափով երեսուն հոգին զսպանակէ մղուածի պէս, միասին վեր ցատկեցին: Տեսարանը քանդակուած է մտքիս մէջ: Զինուորականը քալելով աչքէ անցուց երկսեռ ներկաները եւ ամէն մէկուն հարցաքննեց: Քանի մը օր յետոյ հրաման եկաւ հայերը քշել Տէր Զօր:

Եւ միշտ իշու սայլերով հեռացանք: Ճամբան տեղատարափ անձրեւեց, ջուրերը բարձրացան ... ԿԵԱՆՔ:

Քառասուն տարի ետք իօրս հարցուցի.

Տեղ մը շատ անձրեւ եկաւ, ո՞ր էր:

Կը յիշե՞ս, Մէսքէնէ կը կոչուէր: Զուրը մարդոց մինչեւ ծունկերը հասաւ: Չորս օրէն հողը ծծեց ջուրերը:

Այդ դադարէն օգտուելով, պզտիկ խումբ մը, որուն մէջ էինք նաեւ մենք, ոստիկանները կաշառելով, փախանք Դամասկոս:

Այսպէս եղաւ մեր փրկութիւնը:

Մկրտիչ Անդրանիկ (Բէմպէճեան)

Աղեքսանդրիա, Ապրիլ 2000

«Արեւ» օրաթերթ, 12 Մայիս 2000

ՄԱՅՐԻԿԻՍ ՏՈՒՆԸ

Մեր տան պատից մի քար լինէր,
Նստէի վրան
Ու պատմէի անտուն կեանքիս
Հէքիաթը նրան:

Համօ Սահեան

Ծնած եմ Կեսարիա: Ծնողքս ...

Տաճիկները հայրս կը փնտռէին: Հայրս պահուրտած էր մեր տանը մէջ: Երբ տաճիկները եկան, մեծ մայրս ըսաւ որ ինքը չի գիտեր անոր ուր ըլլալը: Որպէսզի ըսէ իր գաւկին գտնուած տեղը, մեծ մօրս պառկեցուցած էին գետինը եւ սուրերով թէ հրացանով, չեմ գիտեր, կը ծակծկէին մարմինը: Կը տանջէին, կը վախցնէին ...:

Մենք մեծ տուն ունէինք: Բոլոր դռները գոցած էին որ հայրս մօր ձայնը չլսէ, թէեւ մեծ մայրս ձայն չէր հաներ: Այն ժամանակ ես չէի հասկնար թէ ինչ կը պատահի, աւելի ուշ մայրս բացատրեց եւ հետագային ալ միշտ կ'ըսէր. «Հօրդ ազատեց իր մայրը եւ մեր տունը: Մարդը իր տունին պատերէն ներս միշտ ապահով է եւ զօրաւոր: Քանի դեռ մեր տունին մէջն էինք քաջ էինք ու հպարտ: Երբ ելանք մեր տունէն ամէն չարիք ու փորձանք թափուեցաւ մեր գլխուն: Չարը թափուի մեզ տունէն հանողին, անտուն ձգողի գլխուն ...»: Հայրենի տունը եւ մեծ մօրս կամքն ու սէրը ազատեցին հայրս: Բայց ան գաղթի ճամբան վատ հիւանդութենէ մը մեռաւ: Ճամբան ամէն օր շատ մարդ կը մեռնէր:

Թուրք զինուորները ամէն առտու կառքերով մեռել կը ժողվէին եւ կը տանէին: Ո՞ր, չեմ գիտեր: Հայրս ալ տարին:

Ճամբան ոմանք եզով, ուրիշներ էշով, իսկ մեծ մասը ոտքով կը քալէին: Ես ու քոյրս իշու վրայ էինք: Չեմ գիտեր ինչպէս, քոյրս վար ինկեր ու մահացեր է: Հօրեղբօս տղան ալ ճամբան մեռաւ: Գաղթի ճամբան ու վրանը, որուն տակ կը գիշերէինք, չէր կրնար պահպանել մեզ չարէն: Գաղթականներու հետ տաճիկ զինուորներ կային, որ աներեւակայելի գէշութիւններ կ'ընէին՝ կը պռայտէին, աղտոտ խօսքեր կ'ըսէին, կը ծաղրէին, կը ծեծէին, կը սպաննէին, աղջիկները կը գողնային: Գիշերը կը մտնէին այն վրանները, ուր էրիկ մարդ չկար

Եւ շատ շատ գէշութիւններ կ'ընէին: Շատ աղջիկներ անձնասպան եղան ...:

Բայց ժողովուրդը անզէն, անօթի, հալածուած էր: Մեծամասնութիւնը կիներ էին, այր մարդիկը միայն ծերերն էին: Եղածներն ալ կը տանջէին, կը սպաննէին: Ժողովուրդը ստիպուած էր անոնց հրամանին տակը ըլլալ: Ես այս ամէնը չեմ յիշեր, բայց երբ մայրս կը պատմէր, երագի մը, ֆիլմի մը պէս կու գար աչքիս առջեւ:

Մեր դաժան ու երկար ճամբան Սուրիա վերջացաւ: Ես ու մայրս հաստատուեցանք Սուրիա: Մինչեւ 1920 թուական մնացինք հոն: Յետոյ գիտցանք որ մօրս մօրեղբայրը՝ Կարապետ Աղա Աբիկեանը Եգիպտոս է:

Անոր հրաւերով եկանք Եգիպտոս: Ես սկսայ դպրոց երթալ: Յետոյ ստիպուած եղայ 13 տարեկանէս աշխատիլ: Աշխատեցայ, մեծցայ, բայց երբեք չմոռցայ որ տուն պիտի շինեմ մայրիկիս համար:

Մայրս շատ կը յիշէր մեր տունը եւ միշտ կը պատմէր: Ես շատ պզտիկ տարիքէս ինքզինքիս խոստացայ որ մօրս համար տուն մը պիտի շինեմ: Մեծ ցանկութիւն ունէի ճիշդ իր տան պէս տուն մը շինել որ մայրս տուն ունենայ եւ ամէն առիթով չըսէ որ ինք անտուն մնաց:

Եւ շինեցի մեծ, բազմալարկ տուն մը: Ճիշդ է իր ունեցած ու կորսնցուցած տանը պէս չէր, բայց ի՞ր տունն էր, անձնական տունը: Ուրախութեամբ եւ ներքին հպարտութեամբ մօրս առաջնորդեցի իր նոր տունը: Ես կը կարծէի որ շատ պիտի ուրախանայ, պիտի մոռնայ իր բոլոր վիշտերը, բայց ...:

Կը քալէր իր տան սենեակներուն մէջ եւ կու լար: Ուրախութեան էին այդ արցունքները, թէ՞ տխուր յուշերու, ես չկրցայ գիտնալ: Միայն հասկցայ որ մայրս ի՞ր տունը կը փնտռէր: Եւ միայն տունը չէր մայրիկիս տխրութեան եւ արցունքներուն պատճառը:

Օր. Նուէր Թոքաթլեան
Ադեքսանդրիա, Ապրիլ 2000

«Արեւ» օրաթերթ, 16 Մայիս 2000

ՄԱՆՈՒԿ «ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐՈՒ» ՊԱՏԻԺԸ

Ես Մարգուանցի եմ: Մարգուանի մէջ հայութիւնը բաւական լաւ էր եւ շատ: Բայց աքսորի շրջանին բոլորը քշուեցան եւ գրեթէ հայ չմնաց: Մարգուան չմնաց:

Մարգուան քսան հազար հայութիւն կար, հինգ հազար տաճիկ, բայց հայ չմնաց: Կարծես թէ սերունդները վերջացան: Մեր տեսածները Աստուած մարդու տեսնել չտայ:

Կը յիշեմ, ինծի պէս պզտիկ տղոց խումբ մը շարեցին մեծ փոսի մը քով, եւ զինուորները գէնքերով զանոնք որպէս ոճրագործներ պիտի գլորէին փոսը: Մեզմէ ամենէն մեծը տասը տարեկան էր, բայց ոճրագործ էինք, ոճրագործ ...:

Բարեբախտաբար այնտեղ կար բժիշկ մը, որ տաճիկ էր, բայց խղճմտանք ունէր: Ան տեսաւ թէ ինչպէս մեռցուցին ամբողջ ժողովուրդը եւ խնդրեց ներում շնորհել մեզի: Աստուծոյ դէմ մեղք չգործելու համար մտածեցին այլ միջոցներով մեռցնել մեզի:

Թօփալ Օսման անունով հրէշ մը կար: Անոր հրամանով մեզի դրին կաթուղիներու եկեղեցին, գոցեցին դուռ ու լուսամուտ եւ կրակի տուին Աստուծոյ տաճարը, որուն մէջ անմեղ պզտիկներ էին, անգէն ծերեր, կիներ ...:

Մենք չէինք գիտեր որ եկեղեցին կ'այրեն: Կրակը յառաջանալուն հետ, սկսաւ ծուխ մտնել ներս: Այրելու աստիճան կրակը կը ներխուժէր: Պզտիկները կու լային, մայրերը իրենց թեւերուն տակ կ'առնէին պզտիկները, որ հրաշքով մը զանոնք ազատեն ծուխէն ու արդէն ներս խուժող բոցերէն: Ծերերը անձարութենէն կը պոռային, կը հայհոյէին, կը խնդրէին որ գոնէ մանուկներուն խղճան, Աստուծմէ վախնան ...:

Աստուծոյ հրամանով թէ հրաշքով՝ բացուեցան եկեղեցիին դռները: Թէ ինչպէս դուրս նետուեցանք, չեմ կրնար յիշել: Մայրերը նախ պզտիկները կը հանէին բոցերով պարուրուած դռնէն: Կը նետէին դուրս, միայն թէ կրակէն ազատեն իրենց պզտիկները: Բոցերը լափեցին եկեղեցին եւ տապալեցաւ Աստուծոյ տաճարը:

Այս անգամ մայրերը կու լային, կրակէն ազատած զաւակները գրկած: Այդ հրդեհը եւ ուրախութիւն էր մեզի, եւ ցաւ: Այդ պատկերը ոչ մէկ վայրկեան չեմ կրնար մոռնալ: Յետոյ գիտցանք որ տաճիկ բժիշկը ազատած էր մեզի: Կը պատմէին որ այդ բժիշկը հեռագիր

յղած է Մուսթաֆա Քէմալին եւ ըսած. «Օլուխ չոճուխ այրենք նէ, Աստուած մեզի կը պատժէ, մեղք ունի ...»: Մեզի տարին զօրանոց մը որ անօթի ծարաւ մեռցնեն: Մահը անխուսափելի էր: Միայն կը փոխուէին մեռցնելու միջոցները:

Զօրանոցին մէջ ուտելիք չկար, ջուր չկար: Ես պզտիկ քոյր մը ունէի, եւ մայրս մեզի հետ էր: Քոյրս կու լար, ջուր կ'ուզէր: Մայրս մէկ հատ կարմիր ոսկի տուաւ այդտեղի պահակներէն մէկուն, եւ գաւաթ մը ջուր ուզեց: Մարդը միզեց գաւաթի մը մէջ եւ տուաւ. «Ահաւասիկ աս ալ ջուր է», - ըսաւ եւ ոսկին գրպանը դրաւ:

Գիշեր մը օգնութեան աղաղակներ լսեցինք, աղմուկ, իրարանցում եւ վերջը լռութիւն տիրեց: Լոյսը բացուեցաւ, գիտցանք որ տաճիկները հայ ընտանիք մը սուրէ անցուցած են: Թօփալ Օսմանի ժամանակ գողի մը պէս կը մտնէին կը սպաննէին, կը թալանէին, կը գողնային, կ'երթային, իրենց ետեւը դիակներ ձգելով:

Այն ամէնը որ ես տեսած եմ, իմ թշնամիս թող չտեսնէ: Աստուծոյ կամքով ապրեցանք: Հիմա ես հինգ գաւակ ունիմ, տասներկու՝ թոռ: Ամէնքն ալ իսկական հայ են: Զաւակներս բոլորն ալ լաւ մասնագէտներ են, լաւ մարդ, լաւ ծնող: Թոռներս հայ երիտասարդներ են: Անոնցմով միշտ ուրախ եմ: Ասոնք ամէնը կը պարտիմ թէ՛ իմ գաւակներուս եւ թէ՛ իմ կողակցիս: Ան ալ շատ ազնիւ կին մըն է, իսկական հայուհի մը եւ շատ աղուոր մայր:

Նորայր Պէնօհանեան
Աղեքսանդրիա, Ապրիլ 2000

«Արեւ» օրաթերթ, 25 Մայիս 2000

